ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ · ՆԻՒ ԵՈՐՔ, ՅՈՒՆՈՒԱՐ 15, 1897 · ԹԻՒ 2, ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 123

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԻՍՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

ՀԱՅԿ
ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄԱՆԱՅ
ԱՆԳԼԻԵՐԷՆ ԵՒ ՀԱՅԵՐԷՆ
Տարեկան բաժնեգին է կանխիկ
երկու տօլար (տասն ֆրանք)
Հասցէն Ֆ
M. S. GABRIEL, M. D.
341 West 23rd St., New York.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական Նշմարք։
Քրիստոնէական Համակրութիւն և Հայք.— Ժառ. Պատ. Ապօթի առ Նիւ Եորքի Հայս.— Զարին ազատական միտումները Հայ մարտիրոսներու յիշատակին.— Մեռցուած Ամերիկացի Հայոց դատը.— Անգլիերէնի դասեր.— Նիւ Եորքի մէջ.— Այլևայլք։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՔ

«ՀԱՅԿԸ» ՇՆՈՐՀԱՒՈՐՈՂՆԵՐՈՒՆ

Ամերիկայի Հայ երիտասարդութիւնը ՀԱՅԿԻ եօթներորդ տարեշրջանը մասնաւոր համակրութեամբ կ'ողջունէ։ Շատ մը նամակներ առինք, որք ներկայ տարւոյ բաժանորդագնին հետ կը բերեն Խմբագրութեանս քաջալերական և շնորհաւորական խօսքեր՝ անկեղծ սրտէ բխած։ Զբաղմանց ահագին ճնշումը թոյլ չի տար մեզ զատ զատ պատասխան գրել իւրաքանչիւրին, ուստի և այս տողերով կը յղենք ամենուն մեր ջերմագին բարեւներն և շնորհակալութեան հաւաստիքը։

ԽՄԲԱԳԻՐ

***

ԽՆԴԻՐՔ ՄԸ

Մեր Ամերիկայի բաժանորդներուն այս անգամ կը յղենք երկու երկու օրինակ, խնդրելով որ մէկ օրինակը գործածեն իրրև նմոյշ ցոյց տալու իրենց Ամերիկացի բարեկամներուն և համոզեն անոնք բաժանորդ գրուիլ ՀԱՅԿԻՆ։ Անշուշտ ամեն Հայ քանի մը Ամերիկացի ծանօթներ ունի, որոնք փոքր ի շատէ ցաւակցող են Հայ Ազգին։ Եթէ այդպիսիները տեսնեն թէ անգլիերէն լեզուով հայկական թերթ մը կը հրատարակուի Միացեալ Նահանգաց մէջ, շատ հաւանական է որ բաժանորդ գրուին. որով դոքա աւելի կը ճանաչեն ու կը յարգեն Հայ Ազգը։

***

ՄԵՐԻՆՆԵՐՈՒՆ

ՀԱՅԿԻ այս թիւէն 3,100 օրինակ կը հանենք։ Իբր 2,500 օրինակը, ինչպէս նա-

խորդ անգամ, ձրի կը յղենք Ամերիկացւոց։ Մինչև այսօր Հայոց կողմանէ վճարուած բաժանորդագները բաւական չեն միայն մէկ թիւին ծախքերը գոյելու։ Եթէ մեր հարուստները կը կարծեն թէ Ամերիկացւոց մէջ մեր Ազգային դատն ջատագովելու, մեր պէտքերը պարզելու, մեր ազգային պատիւը պաշտպանելու, մեր թշնամիներուն պատասխանելու, մեր ազգային պատմութիւնն, լեզուն, գրականութիւնը, բարեմասնութիւնները ճանչցնելու գործը կարեւորութիւն չունի և և անոր կը նային իբրև անձնական ձեռնարկի, շատ կը սխալին։

Եւ եթէ մեր գործաւորներն, միջնակարգ ազգայիններն չուզեն տարին երկու տոլար տալ այս թերթն պահպանելու համար, նոյնպէս դատապարտելի անհոգութիւն մը գործած կը լինին։

Այս կարճ ազդարարութիւնն կը բաւէ ոչիմներուն և զգացում ունեցողներուն։

***

ՄԵՐ ԵԳԻՊՏՈՍԻ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՍԻՆ

1896 թուականին ՀԱՅԿԻ բաժանորդագրութիւնները չեն վճարուած ոչ Գահիրէէն, ոչ Զակազիկէն, ոչ Մինէթ էլ Կամհէն, ոչ Մանուրայէն, ոչ Իպրահիմիէէն։ Միայն Գահիրէէն չորս հոգի վճարած են տարեգինը։ Մեր բաժանորդները նիւթապէս կարող անձինք են, ուստի և կը կարծենք թէ անհոգութեամբ զանցառու եղած են ոչ թէ կծծութեամբ։

Կը խնդրենք որ անցեալ 1896 և ներկայ 1897 թուականներուն բաժնեգներն միանգամայն յղեն, քսանական ֆրանք, կամ մէկ ֆռանսական լիրա։ Գահիրէէն Մանտա փոսթալով կամ Գռէտի Լիոնէի փոխանակագրով կրնան դիւրաւ մեզի փոխանցել դրամները։

***

Թղթադրամ պարունակող նամակները պէտք է ապահովագրել։

Օտար երկիրներէ դրամ կրնայ յղուիլ Գռէտի Լիոնէի փոխանակագրով, կամ Մընի Օրտրրով (Money Order), կամ ֆռանսական Դէմպոը Փոսթով։

ՔՐԻՍՏՈՆԷԿԱՆ ՀԱՄԱԿՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՀԱՅԿ

(Անգլիերէնին թարգմանութիւնը)

(Այս յօդուածն նոյն է այն նամակին հետ զոր ՀԱՅԿԻ խմբագիրն հրատարակեց, Յունուար 7ին, Մոնթրէալի Հէրալտին մէջի պատասխանի փարքը անուն մէկուն։)

Երբեմն երբեմն լրագրաց մէջ տեսակցութեանց տարօրինակ տեղեկագրութիւններու կը հանդիպինք, որմէ կիմանանք թէ տարօրինակ մարդիկ կան որք կը պարսաւեն Հայոց նկատմամբ ցոյց տրուած համակրանքը իբրև դիւրահաւատ ժողովրդի գործ. կամ կաղ փորձ մը կ'անեն արդարացուցանելու՝ որքան որ հնար է՝ զկոտորածները՝ նուաստացնելով զկոտորեալները. կամ արհամարհոտ արգահատանք մը ցոյց կուտան այն պարզամիտ Քրիստոնեաներուն նկատմամբ որք մորթուած Հայերը նահատակ կը հաշուեն։ Կ'ուզենք այդպիսեաց ընդհանուր պատասխան մը տալ։

Երբ Հայկական ջարդերուն առաջին լուրերը քաղաքակիրթ աշխարհը հասան, շատեր հարցան թէ արդեօք տեղեկագրութիւններն ճի՞շդ էին կամ թէ արդեօք Հայք ինքեանք գրգռած չէ՞ին իրենց աղէտը։ Սակայն անոնք որ թուրք կառավարութեան անցեալ պատմութեանը լաւ ծանօթ էին, ի սկզբանէ անտի հակամէտ երևցան հաւատալու թէ դեռ ամենայոռի լուրերը չէին ժամանած. և իրաւ որ շուարվ նորագոյն տեղեկագրութիւնք եկան արդարացնել վերջնոց կարծիքը։

Երկու տարիէ ի վեր տեղեկագրութիւնք՝ ամենավստահելի տեսակէն և զանազան աղբիւրներէ շարունակ կուգան,— Փոքր Ասիայէն և Հայաստանէն կը գրեն Ամերիկացի միսիոնարները, Եւրոպական հիւպատոսք կը կրկնեն, ճանապարհորդները կը վկայեն, ապաստանեալք կը նկարագրեն, և «Կապոյտ Գրեանը» (Անգլիական կառավարութեան) կը պատմեն դէպքերը.— և դիզուած փաստերու ահագին ծանրութիւնը բոլոր տարակուսող

մաքերը բռնադատած բերած է այն համոզման թէ «Թուրքք են անխիղճ յարձակողները, Հայք՝ անմեղ զոհերը։»

Ի վերայ այսր ամենայնի կան տակաւին ամանք որք կը թուին բացառիկ զգօնութեան համբաւին տենչալ՝ բազմութեան համակրութիւնը դէպ ի Հայս պարսաւելով իբրև մոլեռանդութեան և պարզմտութեան նշան։

Եւ այս բացառիկ ընդարձակամտութեան տէր անհատները կ'ասեն. Այս բոլոր ջարդերը «լոկ ցեղական պայքարի» դէպքեր են. ինչո՞ւ կրօնական հալածանաց գոյն կուտաք անոնց։

Անոնք որ կը ժմրտին այսպէս խօսիլ պէտք է անգէտ լինին այն իրողութեան թէ Սուլթանը Մուհամմէտ «Մարգարէին» յաջորդն է։—թէ ամենայն քաղաքային և քաղաքական կարգք ի պետութեան անդ պարտին Իսլամային օրինաց և աւանդութեանց վրայ հիմնուած լինիլ կամ անոնց հետ համաձայն—թէ ամենայն եղանակաւորութիւնք որք ի ձեռն քրիստոնէական դիւանագիտութեան մուծուած են ի Թուրքիա, սասսիկ պժգալի են Թրքաց։ Այդպիսի եղանակաւորութիւնք ներկայ Սուլթանին երկու նախորդներէն յակամայից ընդունուած են, և Օսմանեան գահուն քրիստոնեայ հպատակք «Խաթթերով» հռչակուած են հաւասար միւսիւլմանաց։ Բայց Համիտ յետադէմ փատիշահ հանդիսացաւ և ինչ որ չինուած էր կէս դարէ ի վեր եւրոպական դիւանագիտութեան ձեռքով՝ քայքայեց։ Նա Եւրոպիոյ քաղաքակրթիչ քաղցր լուծը խորտակեց։ Նա Տէրութեանց դաշնագիրներն ու սուրագրութիւններն առ ոտս կոխեց։ Նա վերահաստատեց իւր քրիստոնեայ հպատակներուն հետ ըստ հաճոյս վարուելու հին բացարձակ իրաւունքը. Նա ծաղու նիւթ արաւ ի պաշտպանութիւն Հայոց կենաց և ստացուածոց Եւրոպիոյ բոլոր յանձնառութիւնները։ Տեղե՞ակ էք այսմ ամենայնի, ընդարձակամիտ և խորաքնին պարոնա՛յք։ Հասու եղա՞ծ էք այսմ։ Այս է խնդրոյն ծուծը։— Հայոց Մեծ Մարդասպանը այդպիսի է ոչ թէ վասն զի Հայք ապստամբեր են իրեն դէմ, այլ վասն զի ինքն իսկ, իբրև Միւսիւլմանաց Խալիֆը, ապստամբած է ընդդէմ քրիստոնեայ Եւրոպիոյ, և Եւրոպիոյ դէմ անզօր եղող իւր կատաղութիւնը կը թափէ իւր անոք հայ հպատակաց վրայ։ Պայքարը Եւրոպիոյ և Համիտի միջև է։ Եւրոպա ասաւ Սուլթանին «պարտիս ոչ ևս հարստահարել զՀայս։» Սուլթանը պատասխանեց ի հեճուկս. «պիտի սպաննեմ զանոնք։»

Եւ դեռ անպատիժ կը շարունակէ իւր եղեռնական գործը։

Եթէ տակաւին ամենադոյգն երկմտութիւն հնարաւոր է նկատմամբ կրօնական շարժառիթներուն որովք ոգեւորեալ է Խալիֆը և յորոց կ'աղբերանան Թրքաց ատելութիւնն ու հալածանքն ընդդէմ Հայոց, յիշենք այն պարագաներն որոց տակ բացումք ի ջարդուած Հայոց մեռանողներ Միւսիւլման խաժամուժին առաջնորդները հարցան Քրիստոնէից իւրաքանչիւրին. «Իսլամութի՞ւնը կ'ընտրես թէ մահ։» Եւ պատասխանն էր. «Պատրաստ եմ մեռնիլ վասն Քրիստոսի,» և մեռաւ։ Այս չէ՞ մարտիրոսութիւնը։

Այսպէս 130,000 Հայ մորթուած է։ 55,000 որք կը մնան անպատսպար։ Հայաստան վայոց ձոր դարձեր է, որբերու և այրիներու երկիր։

Թող Ամենակալ Հայրն իւր օրհնութիւնը տեղայ այն սմենուն վրայ որք բարեկամ կը լինին հայ մարտիրոսաց որբերուն և այրիներուն՝ նոցա ահռելի տառապանացը մէջ։

ՊԱՏՈ ԼԱՅՄՔՆ ԵՊՊԷԹԻ ՌԸՆԸԼՈՍԱԿԹՈՒԹԻՒՆՆ

ՆԻՒ ԵՈՐՔԻ ՀԱՅՈՑ

ԱՅՍ ԵՐԿՐԻՆ ՄԷՋ ՅԱՋՈՂԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հայրենակիցներ,

Ուրախ եմ ձեզ հետ գտնուելու այս երեկոյ։ Կը գնահատեմ ինձի ընծայուած հրաւէրը, որով առիթ ունիմ ձեզ բարով եկաք մաղթելու յԱմերիկա։ Թէև իբր ազգ չկրցինք գործել Հայաստանի համար՝ վասն զի չգիտցանք թէ ինչպէս կրնայինք գործել, սակայն կարող ենք այսչափս անել—այն է բանալ մեր երկրին դռները Հայոց առջեւ։

Ինձմէ խնդրուած է որ ձեզի խօսիմ թէ ինչ են պայմանները որով կրնաք յաջողութիւն գտնել Ամերիկայի մէջ։ Նախ

սա ասեմ ձեզի, թէ ձեզի, իրրև հայապ-գիներու համար, յաջողութեան մասնաւոր պայմաններ չկան։ Յաջողութեան օրէնքները, ինչպէս ամեն ուրիշ օրէնք, մի և նոյն են ինձի և ձեզի համար։

Արդ, յաջողութեան առաջին պայմանը է ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՒԹԻՒՆ։ Մենք ուրիշները կը ճանաչենք բայց ամենէն քիչ կը ճանաչենք մեր բուն անձերը, նոյն իսկ մեր մարմինները։ Երբ տանտիկինը կարի մեքենայ մը ստանայ, իւր առաջին հոգը կը լինի գիտնալ թէ ինչպէս գործածելու է զայն. նոյնպէս երբ երիտասարդը հեծանիւ մը գնէ։ Մեր մարմինը շատ աւելի բարդ մեքենայ մ'է. պէտք է զայն ճանաչենք, անոր գործածութեան լաւագոյն կերպը սորվինք. զայն լաւ պահելու և նորոգելու կերպը։ Առ այս պէտք է լաւ կերակուր, որով սնանի մարմինը. այսինքն սննդարար կերակուր։ Պէտք է օդ, մաքուր և առատ։ Կերակուրը մեր մեքենային ածուխն է, առանց օդի չկրնար ածուխն իւր օգուտն ընծայել։ Պէտք է նաև մաքրութիւն, մորթը լուալ, յաճախ բաղնիք առնուլ, որպէս զի մեքենային մուրն ու մոխիրը արտաքսուի։ Պէտք է մարզանք։ Եւ պէտք է հանգիստ, վասն զի մեր վատնած ուժերը հանգստութեամբ կրնանք վերանորոգել։ Բայց սա կարեւոր բանը միտք պահեցէք, թէ հանգիստը պէտք է գործէն առաջ, ոչ թէ գործէն ետև։ Առաւօտեան ժամանակը գործի ամենալաւ ժամանակն է։

Երկրորդ պայման յաջողութեան է ԶԱՐԳԱՑԱԾ ՄԻՏՔ։ Գիտէք թէ մեր դարուն մէջ ամեն բան մեքենայով կը գործուի. միայն մէկ բան մը կայ զոր մեքենան չէ կարող կատարել մարդուն տեղ— այսինքն՝ խորհիլ։ Այն գործաւորն է ամենէն յաջողը որ կրնայ խորհիլ. և խորհելու համար հարկ է որ դաստիարակուած լինի մարդս. հասկանայ բնութեան օրէնքներն ու մարդկային բնութեան օրէնքներն։ Ջանացէք կրթել ձեր դաւակները. բարեբաղդաբար դպրոց և կրթութիւն ձրի է այս երկրին մէջ։

Երրորդ, ԿՈՐՈՎ պէտք է յաջողութեան համար. յառաջ մղուիլ, արագ և չոյտ լինիլ։ Շոգիի և եղեքտրականութեան դար է այս. մեք ալ շոգիի պէս գործել և կայծակի պէս խորհիլ պարտինք։ Առաւօտը պառկելով մի անցնէք. կառքերու մէջ ծոյլ մի նստիք երբ տեղ մը կ'երթաք. դիտեցէք, կարդացէք, խորհեցէք։

Չորրորդ ունեցէք ՆՊԱՏԱԿ, որոշ նպատակակէտ, դէպ յոր դիմէք միշտ։ Անգամ մը երիտասարդ մշակ մը համարձակեցաւ իւր տէրոջը դուստրը կնութեան խնդրել. և մինչ առաջարկութիւնը կ'ասէր, փայտի կտոր մը կը տաշէր։ Աղան ինքն իրեն ասաւ. տեսնեմ թէ ինչ պիտի անէ տղան. եթէ բան մը չինէ այդ բեկորէն, աղջիկս կուտամ իրեն, բայց եթէ լոկ ընդ խաղ կը տաշէ կը մերժեմ։ Դրժբաղդաբար տղան բեկորը վատնեց, և խնդիրքը մերժուեցաւ։

Օր մը երիտասարդ մը խմբագիր Հորէյս Կրիլիի նամակ մը գրելով հարցաւ թէ ինչ կերպով կարող է խմբագիր լինիլ, յօդուած գրել։ Կրիլի պատասխանեց լակոնական ոճով

Ասելու բան մ'ունեցիր, և ասէ զայն։

Նոյնպէս և ես խրատ կուտամ ձեզ. անելու բան մ'ունեցէք և արէք զայն։ Եւ որպէս զի կատարէք գործը, և հասնիք ձեր նպատակին, յարատեւեցէք, յառաջ գընացէք խոչ և խութ առ ոտն կոխելով։ Ամերիկայի մէջ մրցումը, պայքարը աւելի սաստիկ է քան ուրիշ երկրաց մէջ. և ով որ իսպառ համբերէ նա կը յաջողի։

Հինգերորդ, ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ թէ ժամանակի և թէ դրամի։ Դրամ ծախսելու սա երկու կանոնը յարգեցէք եթէ կուզէք յաջողիլ. նախ, ծախքերնիդ նուազ լինի քան գշահերնիդ. երկրորդ, մի ծախսէք դեռ չվաստկած։

Վերջին և մեծ պայման յաջողութեան, պայմաններու պայմանն է Աստուծոյ օրէնքներուն պատկառ կալ. արդարութեան ոգիովը առաջնորդուիլ։ Շատ զօրաւոր մարդիկ, ինչպէս Նարոլէոն, իրենց յաջողութիւնը խորտակեցին երբ իրաւանց և անիրաւութեան մէջ խտիրը անտես անել սկսան, երբ ծուռ միջոցներով գործ յառաջացնել ջանացին։

Այս ամենը պարզ և անձևական կերպով խօսեցայ ձեզի, իրրև Ամերիկացի առ Ամերիկացիս, ուրախ եմ որ կրնամ ձեր ամենուն խօսիլ իրրև իմ հայրենակիցներուս։ Ի բոլոր սրտէ կը մաղթեմ ձեզ յաջողութիւն ճշմարիտ։ Մնաք բարով։

ՁԱՐԻՆ ԱԶԱՏԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Վարշաւիայէն և Բոլոնիոյ ուրիշ կեդրոններէն առնուած տեղեկութիւնները կը հաստատեն այն կարծիքը թէ Նիկողայոս Բ. Կայսրը կը միտի ազատական քաղաքականութեան մը։ Բոլոնիոյ ժողովրդին դէմ գործածուած խիստ վարչական միջոցները կը մեղմանան այժմ, և աւելի ազատութիւն կը տրուի մամլոյ և հանրութեան։ Բեդերպուրկի Նովոյէ Վրէմիա բացեր է իւր էջերը ի Լատագովութիւն հաշտասէր քաղաքականութեան մը ի Բոլոնիա, և դադարմանն զսպողական միջոցներուն ամէն այն դաւառաց մէջ ուր ռուս կառավարութեան յարած է ժողովուրդը։ Ըստ որում Ն. Վրէմիա երկար ատեն կատաղի թշնամի եղած է կոթոլիկ Բոլոնիացւոց, լեզուի այս բոլորական փոխումը բաւական նշանակիչ է։ Անցեալներ երբ Մոսկուայի իշխանութիւնք կը պնդէին որ խռովայոյզ համալսարականներն աքսորուէին ի Սիպերիա, Զարն դէմ կեցաւ. և այդ ալ բարեգուշակ նշան մ'է Ռուսիոյ մօտաւոր ապագային համար։

ՀԱՅ ՄԱՐՏԻՐՈՍՆԵՐՈՒ ՑԻՇԱՏԱԿԻՆ

Յունուար 6ին Հաւարտնի ճկեղեցւոյն մէջ հանդէս մ'է կատարուեր և Տիկին Կլատսթոն հայ մարտիրոսաց յիշատակին նուիրեալ լուսամուտին քօղը վերուցեր է։ Արարողութենէն առաջ Տիար Կլատսթոն ճառ մ'է խօսեր հայ պատգամաւորութեան մը, յորում ասեր է թէ թէպէտ ի նպաստ Հայոց եղած յուզումը վրիպեցաւ զվեց Տէրութիւններն շարժելէ, ինքն այն անչիջանելի յոյսն ունի թէ աշխարհի մեծագոյն Մարդասպանին շարաչար ընթացքը շուտով պիտի վախճանի։

ՄԵՌՑՈՒԱԾ ԱՄԵՐԻԿԱՑԻ ՀԱՅՈՑ ԴԱՏԸ

Քաղաքիս PRESS օրագիրը կը խնդրէ հետեւեալը։—

Եթէ կը ճանչնաք Հայեր, որոնք Ամերիկայի սիթիզըն ըլլալէ վերջ՝ վերադարձած են Հայաստան և անցեալ տարւոյ կոտորածներուն ատեն իրենք ևս սպանուած են, անոնց վրայով հաճեցէք անյապաղ հետեւեալ հարցմանց ճշտիւ պատասխանել և յղել առ Mr. HURACHIA, 118 room, Bible House, N. Y. Նպատակն է տուգանք պահանջել թուրք կառավարութենէն։

Անուն

Ե՞րբ եկաւ Ամերիկայ.

Ո՞ր տեղ առաւ իւր քաղաքացութիւնը.

Ե՞րբ առաւ.

Ե՞րբ վերադարձաւ Տաճկաստան.

Ո՞ր քաղաք վերադարձաւ.

Որչա՞փ մնաց հոն.

Ե՞րբ մեռցուեցաւ.

Որո՞ւ քով են ատոր քաղաքացութեան թղթերը հիմա.

Ազգական ունի՞.

Եթէ Ամերիկայի մէջ է ազգականը, հաստէն տուէք։

Նիւ Եորք, ՀՐԱՉԵԱՑ

ԸՆԳԼԻԵՐԷՆԻ ԴԻՍԱՐ

ՆՈՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԴԱՍ. Գ.

Անգլիերէն լեզուն դիւրին և դժուար յատկութիւններ ունի։

Դիւրին յատկութիւններն են.

Ա.—Անուններու հոլովումը շատ աւելի պարզ է քան հայերէնի մէջ։

Մենք կ'ասենք	Անգլիացիք կ'ասեն
ՈՒՂ. տունը (Doone)	the house (տունը հաւ.)
ՍԵՌԱԿԱՆ. տանը	of the house
ՏՐԱԿԱՆ. տանը	to the house
ԳՈՐԾԻԱԿԱՆ. տնովը	with the house
ԲԱՑԱՌԱԿԱՆ. տնէն	from the house
ՀԱՅՑԱԿԱՆ. դատնը	the house

Կը տեսնէք թէ house բառը բնաւ չի փոփոխիր այլ նախդիրներով կը շինուին հոլովները։ Ուրիշ բոլոր անուններն ալ այպէս են, չեն փոփոխիր։

Բ.—Անգլիերէն լեզուին դերանուններն ալ բաղդատմամբ Հայերէնին աւելի դիւրին են.

Ես I, իմ my, ինձի to me, ինձմով with me, ինձմէ from me, զիս me.

Գ.—Անգլիերէն լեզուին բայերուն խնարհումը քան զՀայերէնը դիւրին են։

Մենք կա՛սենք	Անգլիացիք կ՚ասեն
Կը սիրեմ (gi sirem)	I love (այ լըվ)
Կը սիրես	you love
Կը սիրէ	he loves
Կը սիրենք	we love
Կը սիրէք	you love
Կը սիրեն	they love
Կը սիրէի (gi sirei)	I loved (այ լըվտ)
Կը սիրէիր	you loved
Կը սիրէր	he loved
Կը սիրէինք	we loved
Կը սիրէիք	you loved
Կը սիրէին	they loved

Կը տեսնէք թէ ներկայ ժամանակին համար միշտ love ձեւն և անցեալին համար loved ձեւն կը կրկնէ անփոփոխ, մինչդեռ հայերէնին մէջ շարունակ կը փոխուի ՍԷՐ արմատին կցուող վերջաւորութիւնը: Եւ այդ է պատճառը որ հայերէնի մէջ «ես» կը սիրեմ, «դուն» կը սիրես չենք ասեր, այլ պարզապէս կը սիրեմ, կը սիրես իսկ անգլիերէնի մէջ I, you, են ևն միշտ կցելու է բային որպէս զի սիրողին ով լինիլը գիտցուի։

ՆԻՒ ԵՈՐՔԻ ՄԷՋ

Քաղաքիս Հայոց համար շարք մը բանախօսութիւններ տալու նպատակաւ «կամաւոր» յանձնախումբ մը կազմուած է հետեւեալ անդամներով.

Ս. Մինասեան, ատենապետ,

Յ. Ս. Յակոբեան, Քարտուղար.

Յ. Թաւշանճեան, Տր. Մ. Տատրեան, Պ. Յակոբեան, Զատրճեան, Ա. Եարտմեան։

Յունուար 7ին տրուած է առաջին բանախօսութիւնը ի Պատ. Ապօթէ, և յետ բանախօսութեանն՝ Տր. Այվազեան հայերէն լեզուաւ համառօտիւ կրկներ է։

Յունուար 19ին Տր. Փարքս պիտի խօսի Հայոց, դարձեալ ի թիւ 220 խսթ 23դ փողոցի Փէլվըրի Մատրան սրահում, երեկոյեան ժամ 8ին։

Ամեն անոնք որք ժամ ուզէն յետոյ կուգան և ոտնաձայն հանելով կը քալեն սրահին միջին կամ առաջին կարգերը հասնելու, շատ դժգոհ կ՚անեն ջնջուշտ խօսող հիւրը։

ԸՅԼ ԵՒ ԸՅԼՔ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ բազմաթիւ քաղաքներէ արդէն մեզ հասած են վիճակագրութիւններ, այս վերջին երկու շաբաթներուն մէջ. բայց գրեթէ ամենն ալ փոքրաթիւ գաղթականութեանց հաշիւներն են. ցարդ մեծագոյններէն չլսեցինք։ Պէտք է հաշիւները գան Ուսաբրէն, Պոսթոնէն, Փրովիտէնսէն, Ֆրէզնոյէն ևն. ևն։

Լոնտոն, Յունուար 3—«Տէյլի Թէլէկրաֆը» հեռագիր մը կը հրատարակէ Կ. Պոլսէն որուն համեմատ Զարն խրատ յըղած կը լինի Սուլթանին որ ամենալուրջ նկատողութեան առնու մեծ տէրութեանց յանդիմանութիւնը վերաբերութեամբ բարեկարգութեանց որք կայսրութեանը հարկաւոր են, աւելցնելով և այն որ եթէ մըտիկ չանէ՝ ամենածանր հետևանաց նշաւակ արած պիտի լինի ինքզինք, մինչև իսկ օտար միջամտութեան։ Զարն ասած է նաև Սուլթանին թէ այս խրատու անսալն անհրաժեշտ պայման մ՚է իւր կայսրութեան անխոռ պահպանմանը և խաղաղութեան չվրդովելուն։

Լոնտոն, Յունուար 6.—Լուր կայ Կ. Պոլսէն թէ Հայ բանտարկելոց վերջին մասն ալ արձակուեր է այսօր՝ Սուլթանին ներողութեան հրամանին համեմատ։

Լոնտոն, Յունվար 11.—Կ. Պոլսէն հեռագիր մը կը ծանուցանէ թէ Իտալական հպատակ մը, Մարանի անուն, անցեալ օր գաղտնապէս նաւ դրուած էր Տրապիզոնէն աքսորուելու համար ի Կարին։ Իտալական դեսպան Սին. Փանսա պահանջած էր Մարանիի անմիջապէս վերադարձն ի Կ. Պոլիս դատուելու համար ըստ օրինի և սպառնացած էր թնդանօթանաւեր յղել։ Յայնժամ Դուռը գրաւոր խոստում տուած էր համակերպման.

Այս միջադէպը կարծեաց յուզում մը յառաջ բերեր է ի Կ. Պոլիս այն պատճառաւ որ Իտալիա զմիւս տէրութիւններն իրեն թեր ունի կարծեր են։ Այս մասին

Հռովմէն կը գրեն «Տէյլի Նիւզին» թէ «ամեն ոք կը նկատէ թէ Սուլթանը երբէք այսպիսի խոնարհացման ենթարկուած չէր դեռ դեսպանի մը կողմէն որ յայտնապէս յայտարարէր թէ խոստումը անընդունելի է, պէտք է գրաւոր յանձնառութիւն։»

Օսմ. Պանդային տնօրէն Սրր Է. Վոնոէնթ կը տեղեկացնէ թէ օսմանեան ելմտից տարեկան բացը մէկ միլիոն լիրայ եղած է, և կը համարի թէ բանակի և այլ ծախքերէն զեղչ անելով կարելի է այդ բացը գոցել գալող տարի։

Ըստ Նիւ Եորքի «անանուն» թերթին, 65 Հայեր որք ի Վառնա տպատանած էին, վերադարձած են ի Կ. Պոլիս Յունուար 6ին և առանց դժուարութեան յանձնուեր են Պատրիարքարանին։

Հետևեալ որոշումը անցեալներ Պոսթոնի մէջ քուարկուած է «Հայաստանի Միացեալ բարեկամներէն» — «Ֆ. Հափքինսը Ասիթի վերջերս արած ջանքերը զՀայս վատահամբաւելու և 60,000 անզէն Հայ քրիստոնէից ջարդը չքմեղելու՝ նախատինք մ'է Ամերիկեան ժողովրդին իմացողութեանը որ նորա անունը յաւիտեան պիտի ընկերացնէ մեծ Մարդասպանին անունը հետ։»

ՄՇԱԿին կը գրեն Պէռլինէն թէ հոն այս տարի քսան և վեց հայ ուսանող կայ, որոց երեքը ուսանողուհի են։ 8 հոգի բնագիտութիւն կ'ուսանին, 4՝ մանկավարժութիւն, 3՝ հասարակական գիտութիւններ, 2՝ գիւղատնտեսութիւն, 2՝ բժշկութիւն, 1՝ լեզուագիտութիւն, 1՝ իրաւագիտութիւն, 2՝ նկարչութիւն, 1՝ աստուածաբանութիւն։

ՀԱՅԿԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Յ. Կ. Ն. Ֆոլրիվը.—Ձեր գրութիւնը չենք կրնար հրատարակել։ Պատճառը բացատրած ենք Ժամանակաւ ՀԱՅԿԻ մէջ։

Հ. Դ. Ֆ. Վիէննա.— Ձեր ուղածը կը ղրկեմ։ Իսկ Հայոց խնդրոյն վրայ վերջերը յԱմերիկա և յԱնգլիա հրատարակուած բոլոր գրքերու և տետրակներու կատարեալ ցուցակը պիտի գտնէք ՀԱՅԿԻ յաջորդ թուոյն մէջ։

HISTORY OF THE ARMENIANS IN INDIA
From the earliest times to the present day,
by MESROB J. SETH
Armenian Examinor to the University of Calcutta
190 էջ, լաթակազմ։ Գինն է 5 ֆր. 50 սթմ. կանխիկ վճարելի։
Դիմել հեղինակին հետևեալ հասցէին.
11, Wellesley Square, E. Calcutta, India

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Այս երկ կը ջանայ պարզել թէ Հայ կական խնդիրն այլ և ս կենաց և ընչից ապահովութեան խնդիր չէ, այլ Հայ ազգին իւր պատմական հայրենեաց մէջ վերածնութեան կամ կորստեան խնդիրն է։ Հետևապէս հարցն այն չէ թէ կարօտ ենք համակրանաց և պաշտպանութեան, այլ թէ կարող ենք ինքնապաշտպան լինիլ և վերականգնիլ իրրեւ ազգ։ Ձերկրաւոր թագաւորութիւնն, ինչպէս զերկնաւորն, բռունք յափշտակեն։ Արտաքին ճշմարիտ աջակցութեան ընդունակ կը լինիմք միայն երբ զինեալ աջ մեր բարձրացուցեմք. Ոչ թէ բան մ'առնելու այլ բան մի լինելու խնդիրն է երկու խնդրոց մեծագոյնն։
Գինն է 50 սանթիմ (10 սէնթ) 55 երես։ 1893
«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» 1892, և «ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ ՀԱՅՈՑ» 1879, Սպառած։

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Այս տետրակ հաւաքածոյ մ'է հեղի նակին ազգային ատենախօսութեանց եօթին, որք են ԶԷՅԹՈՒՆ, ՍՈՒՐ, ՀՆԱՐ Է, ԴՐԱՆ ԳԱՂՏՆԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ, ԶԱՐԿ, ՆԵՐՔԻՆ ՎՏԱՆԳՔ, ՅԱՂԹՈՒԹԻՒՆ ՕՐԷՆԲԻ ՈՒԺՈՎ։ Գինն է 1 ֆրանք (20 սէնթ) 71 երես։ 1893

«Հայքի» նախորդ տարիներն կը վաճառուին հետևեալ գներով.
Ա. տարի, 1 տալար 50 սէնթ կամ 7.5 ֆր.
Բ. ,, 2 ,, կամ 10 ֆրանք։
Գ. ,, 2 ,, ,, ,, ,,
Դ. ,, 2 ,, ,, ,, ,,
Ե. ,, 2 ,, ,, ,, ,,

NEUMANN BROS.

BOOKBINDERS

5 and 7 East 16th St.,

NEAR 5TH AVE.

NEW YORK.

ՆԻՒՄԱՆ ԵՂԲԱՐՔ

ԱՆԴԵՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՔ

5 ԵՒ 7 ԱՐԵՒԵԼՔ 16Դ ՓՈՂՈՑ

ՄՕՏ 5Դ ՊՈՂՈՏԱՑԻՆ

ՆԻՒ ԵՈՐՔ

ՊԱՏԿԵՐԴ ՀԱՆԵԼ ՏՈՒՐ

Պատուական բայց ոչ սուղ, վարպետ լուսանկարչին քով որ կը գտնուի

ՈՒԹԵՐՈՐԴ ԷՎԻՆԻՒԻՆ ՎՐԱՑ

Թիւ 395

(29դ և 30դ փողոցներուն միջև)

Եւ անուն է—

THE IMPERIAL PHOTO STUDIO.

395 Eight Ave.,

New York.

FOR HOLIDAY PRESENTS

SWISS MUSICAL BOXES

Playing any number of tunes

GREAT REDUCTION

in prices of music boxes playing a limited number of tunes.

Musical Novelties, etc.

JACOT & SON

39 Union Sq., New York.

ԵՐԱԺՇՏԱԿՍՆ ՍՆՏՈՒԿՆԵՐ

ԶՈՒԻՑԵՐԻԱՑԷՆ

Այս սնտուկները կրնան նուագել որքան եղանակ որ ուզէք։ Գներն շատ իջեցուցեր ենք այն սնտուկներուն որք սահմանաւոր թուով եղանակներ կը նուագեն։ Ունինք ամեն երաժշտական նորելուկ բան.

ԺԱԳՈՑ ԵՒ ՈՐԴԻ, 39 Union Sq.

Ed. LEGOLL

ԴԵՂԱԴՈՐԾ

286, 7դ Էվինիւ Նիւ Եորք

26դ և 27դ Փողոցներուն միջև

Դեղադրեր կը շինուին խնամով

ԺԱՄԱՑՈՒՈՑՆ

Պատիւ ունիմ ծանուցանելու թէ ճարտարապետ չոգեշարժ մեքենայիցլինելով, կը գրաւիմ նաև ժամագործութեամբ երեկոյները ժամ 8էն մինչև 11 ժամացոյց նորոգելու։

ա՛ւ կը գտնուին քովս ամեն կարգի նոր ժամացոյցներ ալ աժան գներով։ Անոնք որ կը փափաքին աղէկ ժամացոյցի մը տէր ըլլալ առանց որս լինելու խաբերայ Հրէյից և այլ աղդաց որք կրկնապատիկ գինն կը պահանջեն, կրնան դիմել մեր հասցէին։

MISAK M. PHILIP,

89 Madison St, New York.

ՄԱՐԶԱՐԱՆ

ՄԱՐԶԱՐԱՆ 117 երեսէ բաղկացած աշխատասիրութիւն մ'է Տ. Գրիգոր Գասպարեանի դրչէն, տպեալ Նիւ Եորք, Մ. Մ. Գ-ի տպարանում, 1892ին։ Առաջին մասին մէջ, որ 77 հատուածներէ կազմեալ է և 36 մասերէ կամ պատկերներէ, կ'ուսուցանէ թէ զինուորն ինչպէս պէտք է կայնի, բարեւէ, քալէ, վազէ, շրջան անէ, սուին, հրացան բռնէ ու գործածէ, կրակէ անհատապես, շարքով, ծնրադրութեամբ, գետնամած ենն։։ Երկրորդ մասում կ'ուսանդէ «ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻՔ ՄԱՐՏԱԳԻՏԱԿԱՆՔ։» Այս գիրքն կարդալ և ըստ այնմ իրենք զիրենք մարզել պարտին մեր երիտասարդք։ Գին 50 սենթ։

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. Մ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ